«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա՝ Աշխարհագրություն

Թեմա՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ուսուցիչ՝ Լուսինե Հովհաննիսյան

Դպրոց՝«Երևանի Գալինա Ստարովոյտովայի անվան հ.177 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Խաչատրյան Աշոտ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Սյունիքի մարզի զբոսաշրջության զարգացման հեռանկարները----------6

Եզրակացություններ , առաջարկություններ----------17

Օգտագործված գրականության ցանկ----------18

Սյունիքի զբոսաշրջային ներուժի նկարագրությունը

Ներածություն

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձարժևորմանը:

Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Սյունիքի մարզում առկա է զգալի զբոսաշրջային ներուժ: Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Սյունիքը հարուստ է գեղատեսիլ լեռներով: Մարզում է գտնվում բարձրությամբ ՀՀ երկրորդ լեռնագագաթը՝ Կապուտջուղը (3904մ), ինչպես նաև Խուստուփ լեռը (3214մ), Բարգուշատի լեռնաշղթայի գեղատեսիլ բարձունքները՝ Աճանան (Տափասար) լեռը (2393մ), Կատարը (3012մ) և այլն: Սյունիքն առատ է նաև ստորերկրյա քաղցրահամ, հանքային թերմալ ջրերով, որոնցից են Սիսիան-Ուռուտյան, Լիճք-Տաշտունյան, Քարաշեն-Խոզնավարյան հանքային աղբյուրները, "Քաջարան" թերմալ ջուրը, որը "Ջերմուկի" նմանօրինակն է: Մարզի քաղաքներում գործում են հյուրանոցներ, մասնավոր հյուրանոցատիպ հանգրվաններ, հանրային սննդի օբյեկտներ: Մարզը հարուստ է պատմամշակութային և բնության հուշարձաններով, տեսարժան վայրերով: Հայտնի են Սյունիքի մարզի զբոսաշրջային գրավչության բնական օբյեկտները: Մարզի զբոսաշրջության զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր կարող են խաղալ Տաթևի վանական համալիրը, Քարահունջի աստղադիտարանը: Տաթևի վանքը միջնադարյան ճարտարապետության ակնառու հուշարձան է, որն ընդգրկում է Գրիգոր Լուսավորչի, Պողոս-Պետրոս եկեղեցիները (խաչագմբեթային սրահի տեսքով, ընթերասեղաններով 4 անկյուններում և որմնանկարներով, 10-րդ դ.), Սուրբ Աստվածածին եկեղեցին (գմբեթային սրահի տեսքով, 11-րդ դ.), ամենաուշագրավ հուշարձանը՝ ճոճվող սյունը (904թ.): Զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է

հուշանվերների շուկայի առկայությունը և զարգացումը: Մարզում կան շնորհալի վարպետներ, որոնք այսօրվա դրությամբ կատարում են սակավաթիվ պատվերներ կամ էլ իրացնում են իրենց արտադրանքը մայրաքաղաքում և Հանրապետության սահմաններից դուրս: Պահանջարկի առկայության դեպքում հուշանվերների շուկան մարզում շատ արագ կարող է վերականգնվել այս վարպետների և առևտրական կազմակերպությունների միջոցով:

Զբոսաշրջության զարգացման կարևոր բաղադրիչներից է նաև սյունեցու կերպարը. խառնվածքը, հյուրասիրությունը: Սիսիանի պանիրը, Քարահունջի թթի օղին, Կապանի "ժինգյալով հացը", Մեղրու նուռն ու թուզը կարող են դառնալ զբոսաշրջային գրավչության տարրեր:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունը

Մարզն ամեն տարի կարող է ընդունել և սպասարկել մոտ 6000 և ավելի զբոսաշրջրիկ: Զբոսաշրջության զարգացման շնորհիվ կլուծվեն մի շարք սոցիալական հիմնախնդիրներ (աշխատատեղերի ստեղծում, շուկայի ընդլայնում և այլն): Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ ռազմավարությամբ.

- Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին:

- Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգում, վերակառուցում, կառուցում, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրում, Տաթևի համալիրի վերանորոգման, Վահանավանքի և մարզի մյուս համալիրների վերանորոգման ավարտում, առանձին համալիրների վերանորոգում, վերակառուցում կամ մասնակի նորոգում, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգում:

-Մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում:

- Մարզի՝ նախկինում գործող օդանավակայանների վերագործարկում, փոքր ավիացիայի օգտագործում:

- Երկաթուղային տրանսպորտով կապի ապահովում Երևանի և արտաքին աշխարհի հետ:

- Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Սյունիքի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորումը և միջազգային շուկայում ներկայացումն ու ամրապնդումը, մարզի ինտերնետային կայքում զբոսաշրջության վերաբերյալ վեբ էջի ստեղծում և էջի արհեստավարժ կառավարում:

- Սփյուռքի հետ կապերի համատեքստում՝ արտասահմանում գտնվող հայության շրջանակներում բարձրացնել Սյունիքի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար:

- Զբոսաշրջության զարգացման առաջնային ձևերի կիրառում:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՔԱՐԱՀՈՒՆՋ

Ավելի քան 7500 տարի առաջ Քարահունջում մարդիկ ուսումնասիրում էին աստղերը և չափում ժամանակը: Շվեյցարացի գիտնական, գիտությունների դոկտոր Հ.Պ.Կլայները 1995 թ.–ին ուսումնասիրել է Քարահունջի տարածքը: Նա ուշադրություն է դարձրել N68 քարին, որի փորված խորշի մեջ անձրևաջուր էր լցված: Ջրի մակերեսից արտացոլված արևի ճառագայթը N69 քարի գագաթի հետ կազմում է որոշակի անկյուն: Նա կարծիք է հայտնել, որ առանձին կանգնած N200 քարը խաղացել է նույն դերը, ինչ Սթոունհենջի հայտնի Կրնկաքարը: Կլայները հայտնաբերել է նաև մի շարք գործիքներ, որոնք ամենայն հավանականությամբ առնչվել են աստղագիտությանը: 2001 թ.–ին Եվրասիական աստղագիտական միության նախագահ ռուս պրոֆեսոր Ն.Գ.Բոչկարյովը իր երկու ասպիրանտների հետ հայտնաբերեց ևս N90ա պերիսկոպ–քարը, որը ընկած էր հարավային թևի մոտ գտնվող N90 քարի մոտ: «Քարահունջը բավականին լուրջ աստղադիտարան է»՝ այսպիսին էր պրոֆ. Բոչկարյովի առաջին գլխավոր կարծիքը: Հետագայում նա կիրառեց այլ մեթոդներ: 2003 թ.–ին նա ևս եկավ այն եզրակացության, որ Քարահունջը ավելի քան 7500 տարեկան է՝ նշելով, որ այն աշխարհի ամենահին աստղադիտարանն է:

Քարահունջ Աստղադիտարան

Երևանից 200կմ հեռավորության վրա, Սիսիան քաղաքի մոտ գտնվում է նախապատմական մի հսկա մոնումենտ, որն առաջին հերթին բացառիկ է նրանով, որ միմիայն այնտեղ կարելի է միաժամանակ տեսնել մենհիրներ, դոլմեներ, կրոմլեխ, կուռգաներ և կիկլոպյան ամրոցի մնացորդներ: Հուշարձանի մասին առաջին գրավոր հիշատակությունը արել է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (13-14-րդ դդ.): Ըստ այդ հիշատակության՝ հուշարձանի անունը Քարունջ (Քարահունջ) է: 18-19-րդ դարերում

հուշարձանը ստացել է «Զորաց Քարեր» անունը (գրաբարում «զօր» նշանակում է «օր», այսինքն՝ օրերի քարեր, օրացույց քարեր): Հնագիտական պեղումներ կատարվել են միայն հուշարձանի հարակից դամբարաններում՝ Մ. Հասրաթյանի, Օ. Խնկիկյանի կողմից: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են բրոնզե զարդեր, հայելիներ, կավե տարատեսակ իրեր, այլ առարկաներ: Պեղումների արդյունքում դամբարանները թվագրվել են 3-2 հազարամյակներին: Բայց հուշարձանի գլխավոր առանձնահատկություն հանդիսացող մենհիրները (ուղահայաց կանգնեցված քարերը) և նրանց շրջակայքը չեն պեղվել: Քարահունջում կա 0,5-3 մետր բարձրության, մինչև 10 տոննա կշիռ ունեցուղ 222 մենհիր, որոնցից 84-ն իրենց վերին մասում ունեն 4-5սմ տրամագծով անցքեր:

Որոշ հնագետներ գտնում են, որ անցքերը բացվել են, որպեսզի քարերը տեղափոխելու ժամանակ դրանցից պարաններ կապեին և քաշեին, սակայն դա անհնար է, որովհետև անցքերն արված են քարերի վերին մասում և, եթե դրանցից քաշեին՝ անցքի մասը կջարդվեր: Կան քարեր, որոնց անցքերը կիսատ են բացված: Դա վկայում է այն մասին, որ քարերը տեղափոխվել, տեղադրվել են և հետո դրանց վրա անցքեր են բացվել: Որոշ «հանճարեղ» հնագետներ էլ կարծիք են հայտնել, որ այդ անցքերից ձիեր են կապել. դա բացարձակ հիմարություն է: Հուշարձանի աստղագիտական նշանակության մասին առաջինը ենթադրություն է արել Օնիկ Խնկիկյանը, 1984թ.-ին:

1994, 1995, 1996, 1997, 1999, 2001 թվականներին Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ԳԱԱ) ակադեմիկոս Պարիս Հերունին իր անձնական միջոցներով կազմակերպել է գիտարշավներ, որոնց ընթացքում կազմվել է հուշարձանի մանրամասն տոպոգրաֆիական քարտեզը, չափվել է Քարահունջի աշխարհագրական դիրքը (լայնությունը՝ 39*34, երկայնությունը՝ 46*01, ծովի մակարդակից բարձրությունը՝ 1770մ), տեղանքի մագնիսական շեղման անկյունը, հորիզոնին գտնվող լեռնաշղթաների անկյունային բարձրություններy՝ 360* ազիմուտների համար, չափվել են քարերի բոլոր անցքերի ուղղվածությունները, ազիմուտի և տեղի անկյունները, կատարվել են նաև այլ չափումներ: Կազմվել է 222 մենհիրների լիակատար կատալոգ՝ քարերի չափերի ու վիճակի մասին նկարագրությամբ: Կատարվել է արևի և լուսնի ծագելու, մայր մտնելու և կուլմինացիայի ֆոտոֆիքսում:

Քարահունջ աստղադիտարանը բաղկացած է հետևյալ մասերից. կենտրոնական շրջան, հյուսիսային թև, հարավային թև, հյուսիս-արևելյան քարուղի, լարագիծ, որը հատում է շրջանը, նաև՝ առանձին կանգնած քարեր: Կենտրոնական շրջանը կազմված է 40 քարից (կենտրոնական շրջանի քարերն անցքեր չունեն): Շրջանի կենտրոնում գտնվում է 7x5 քառակուսիմետր չափերով (նույն չափերը ունի Գառնու տաճարը) գետնափոր կառույց, որը ծառայել է, որպես տաճար կամ պաշտամունքային դամբարան: Հյուսիսային թևը ձգվում է կենտրոնական շրջանից դեպի հյուսիս: Այն բաղկացած է 80 քարից, որոնցից 49 ունեն անցքեր: Թևի երկարությունը 136 մետր է: Հարավային թևը ձգվում է կենտրոնական շրջանից դեպի հարավ: Այն բաղկացած է 70 քարից, որոնցից 26 ունեն անցքեր: Թևի երկարությունը 115 մետր է: Հյուսիս-արևմտյան քարուղին ձգվում է կենտրոնական շրջանից և ուղղված է արևի ծագման կետին՝ ամառային արևադարձի օրը (նույն կետին նայող քարուղի կա նաև Անգլիայի Սթոունհենջում): Քարուղին բաղկացած է 8 քարից, որոնցից 2 ունեն անցքեր, երկարությունը 36 մետր է: Լարագիծը հատում է

կենտրոնական շրջանը և՝ որպես հյուսիսային թևի շարունակություն, միացնում այն հարավային թևին: Լարագիծը բաղկացած է 20 քարից, որոնցից 6 ունեն անցքեր: Կան նաև 5 առանձին կանգնած քարեր, որոնցից 1 ունի անցք: Հնարավոր է, որ առանձին կանգնած քարը, ինչպես Սթոունհենջի կրկնաքարերը, օգտագործվել են որպես նշանառության հատիկ: Ակադեմիկոս Հերունին հայտնաբերել է բազմաթիվ քարե աստղագիտական գործիքներ:

Կա 17 քար՝ արևը դիտելու համար, ներառյալ արեւածագի #65,161,187 քարերը՝ ամառային արևադարձը դիտելու համար, #97,98,100 քարերը՝ ձմեռային արևադարձը դիտելու համար, արևամուտի #52,99 քարերը՝ ամառային արևադարձը դիտելու համար, #108,169,177 քարերը ձմեռային՝ արևադարձը դիտելու համար, #40,55,63,64,67,79 քարերը՝ գարնան և աշնան գիշերահավասարի օրերին արևածագի ու արևամուտի պահը դիտելու համար: Կա 14 քար՝ լուսինը դիտելու համար:

Ակադեմիկոս Հերունին Քարահունջի տարիքը հաշվել է 4 իրարից անկախ աստղագիտական մեթոդներով՝

Արևի և լուսնի ծագելու ու մայր մտնելու ազիմուտների տեղաշարժով,

Աստղերի անցնելը զենիթի կետով,

Աստղերի ծագելու ու մայր մտնելու ազիմուտով,

Աստղերի կուլմինացիաների բարձրությունով:

Բոլոր մեթոդներով հաշվելու դեպքում էլ Պ. Հերունին ստացել է գրեթե նույն տարիքը՝ 7500 տարի մեզնից առաջ: Քարահունջի տարիքը հաշվել է նաև Եվրասիական Աստղագիտական Միության նախագահ Ն. Գ. Բոչկարյովը, որը մասնակցել է 2001 թվականին ակադեմիկոս Հերունու կազմակերպած գիտարշավին: Ըստ Պրոֆեսոր Բոչկարյովի հաշվարկների՝ Քարահունջը 7000-8000 տարեկան է: 1999 թ-ի փետրվարին ակադեմիկոս Հերունին Քարահունջի վերաբերյալ իր բոլոր ուսումնասիրություններն ուղարկել է հնագույն մոնումենտների աստղագիտական մեթոդներով թվագրման խոշորագույն մասնագետ Ջ. Ս. Հոուկինսին: Պրոֆեսոր Հոուկինսը ստուգել է հայ ակադեմիկոսի կատարած հաշվարկները և համաձայնել դրանց հետ՝ շեշտելով, որ Քարահունջը շատ նմանություններ ունի Անգլիայի Սթոունհենջի և Իռլանդիայի Քալենիշի հետ:

1994թ-ի գիտարշավի ժամանակ Քարահունջում հայտնաբերվեց 3 քարից կազմված մի աստղագիտական գործիք, որը մինչ այսօր կատարում է իր ֆունկցիան: Գործիքը բաղկացած է #60,62,63 քարից: #60,62 քարերի անցքերը ունեն տարբեր անկյուններ, բայց նրանց 2-ի միջից էլ երևում է #63 քարի գագաթը: Վերջինիս գագաթն այնպես է տաշված, որ #62 քարի անցքից գագաթը դիտելու դեպքում ամբողջ տարվա մեջ միայն գիշերահավասարի օրը՝ մարտի 21-ին, ուղիղ կեսօրին, հնարավոր է տեսնել արևը: Հետաքրքիր է նաև, որ #62 քարի անցքի ուղղվածությունը դեպի #63 քարի գագաթ կազմում է 39,5 աստիճան անկյան ուղղահայացի նկատմամբ, այսինքն՝ նունքան, որքան տեղի աշխարհագրական լայնությունը:

Այսպիսով, այս գործիքի միջոցով հնարավոր է եղել (30” ճշտությամբ) չափել տեղի աշխարհագրական լայնությունը նաև 2 վայրկյան ճշտությամբ մարտի 21-ին (տարվա իրական սկիզբը): Այս, ինչպես նաև այլ գործիքներ, Քարահունջում վկայում են այն մասին, որ միջնադարյան Եվրոպայից շատ հազարամյակներ առաջ Հայաստանում իմացել են, որ տարին բաղկացած է 365+0,25 օրից, նաև՝ երկրի գնդաձևության մասին: Հնարավոր է, որ #63 քարն օգտագործվել է նաև որպես օրացույց, արեգակնային ժամացույց: «Քարահունջ» նշանակում է «խոսող քարեր» (հունջ-հնչյուն): Քարահունջի անունից են ծագում Անգլիայի «Սթոունհենջ», Ֆրանսիայի «Քարնակ», Իռլանդիայի «Քալենիշ» անունները (բոլորն էլ հնագույն երկնադիտարաններ են, Քարահունջից տարիքով ավելի փոքր): Հնագույն անգլո-սաքսոնական ժամանակագրության գրքում (8-րդ դար) գրված է՝ «Անգլիայի (Բրիտանիայի) առաջին բնակիչները բրիտներն են, որոնք եկան Արմենիայից»: Շատ հետաքրքիր է, որ Անգլիայի Սթոունհենջից մինչևԵգիպտական բուրգեր և մինչև Քարահունջ գրեթե նույն հեռավորությունն է: Մաթեմատիկոս Վաչագան Վահրադյանը հայտնաբերել է, որ Քարահունջի քարերի դասավորվածությունը կրկնում է կարապի (անգղի) համաստեղության աստղերի դասավորվածությանը: Նույնատիպ թևերի բացվածք ունի Արևմտյան Հայաստանում՝ Պորտասարում (Գյոբեգլի Թեպե), հայտնաբերված նախապատմական աստղադիտարանի քանդակներից մեկի վրա պատկերված անգղը: Քարահունջից մոտ 25 կիլոմետր հեռու, ծովի մակարդակից մոտ 3500 մետր բարձրության վրա կա հրաբխային լիճ, որի ափին կան բազմաթիվ ժայռապատկերներ՝ հիմնականում կենդանիներ, կենցաղի և որսի տեսարաներ, բայց այնտեղ կա նաև մի պատկեր, որտեղ պատկերված են տղամարդ, կին, ծառ՝ վրան պտուղ, և օձ: Կինը բռնել է պտուղը:

ՈՐՈՏՆԱՎԱՆՔ

Որոտնավանքը հիմնադրվել է 1000 թվականին Սյունյաց թագուհի Շահանդուխտի կողմից: Եկեղեցին ունի կենտրոնագմբեթ, եռախորան, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով հորինվածք: Ներսը զարդարված է եղել որմնանկարներով, որոնցից հյուսիսային խորանում պահպանված հատվածը պատկերում է շրջանի մեջ աստղազարդ կապույտ երկինք, կենտրոնում՝ հրեշտակ: Եկեղեցու հյուսիսային պատին կից, աստիճանաձև պատվանդանի վրա XI դ. հուշասյուն է կանգնեցվել՝ գագաթին խոյակի վրա դրված խաչարձանով: Շահանդուխտ թագուհին

վանքի շրջակայքում կառուցում է նաև աղոթարան, արհեստանոցներ, պահեստներ և վանքը շրջափակում պարսպով: Շահանդուխտ թագուհին և իշխան Սևադան թաղվել են Որոտնավանքում: 1104 թ. Որոտնավանքը ավերվել է սելջուկների կողմից և հետագայում զարթոնք ապրել Օրբելյանների օրոք: Որոտնավանքում գիտական և եկեղեցական գործունեություն է ծավալել միջնադարի հայ փիլիսոփա Հովհան Որոտնեցին (1315-1388 թթ.), ով 1340-ական թթ. Գլաձորի համալսարանից տեղավոխվել էր Որոտնավանք: Նա սերտ կապեր է ստեղծել Որոտնավանքի և Տաթևի միջև:

ՇԱՔԻԻ ՋՐՎԵԺ

Շաքիի ջրվեժի տեղանքը իրենից ներկայացնում է խորը կիրճ՝ հարուստ ժայռերով և քարայրներով: Դրանցում հայտնաբերվել են մարդու գործունեության հետքեր, ինչպես նաև մոխիր, որը թվագրվում է պալեոլիթի ժամանակաշրջանին: Ավանդության համաձայն, թշնամիները Գեղարքունի գավառից 93 կույս աղջիկ են ուղարկում Մուղանում բանակ դրած իրենց առաջնորդին: Երբ գերի աղջիկների քարավանը հասնում է այստեղ, դիմելով իրենց առևանգիչներին, նրանք ասում են՝ «Մենք երկար ճանապարհին շատ փոշոտվել ու կեղտոտվել ենք, թույլ տվեք գետում լողանանք, նոր ներկայանանք ձեր մեծին»: Առևանգիչները համաձայնում են: Աղջիկները նետվում են Որոտանի ալիքների մեջ և սուզվելով անհետանում: Միայն Շաքե անունով մի կապուտաչյա աղջիկ Որոտանը թափվող գետակի միջով փախչելով, փորձում է ազատվել: Թշնամիները հասնում են նրա ետևից, սակայն նույն վայրկյանին գետակի մեջ հրաշքով մի ժայռ է խոյանում, և ջուրը նրա վրայով գահավիժելով, իր ճերմակ փրփուրների տակ թաքցնում է Շաքեին: Դրանից հետո այդ ջրվեժն ու նրա մոտ գտնվող գյուղը կոչվում են Շաքի անունով:

ՍԻՍԱՎԱՆՔ

Սիսավանք՝ Ս.Գրիգոր տաճար, գտնվում է Սիսիանում: Կառուցել է Սյունիքի Կոհազատ իշխանը նահանգի հոգևոր առաջնորդ Հովսեփ Ա-ի (663-682թթ.) և վանական Թեոդորոսի օժանդակությամբ: Տաճարի հիմնադիրների մեծադիր պատկերաքանդակները՝ համապատասխան մակագրություններով, գտնվում են գմբեթի տակ `փոքր տրոմպների շարքում: Սիսավանքը, ըստ իր հատակագծային լուծման, կրկնում է կառույցների՝ Ավանի, Հռիփսիմեի եկեղեցիների տիպի հիմնական հատկանշական գծերը: Ի տարբերություն նույնատիպ տաճարների՝ գմբեթատակ տարածությունը այստեղ ճիշտ քառակուսի է, բոլոր աբսիդները հավասար են միմյանց և ունեն երեքական մեծադիր լուսամուտ, իսկ արևելյան անկյունային սենյակներում կան լայնանիստ, կանոնավոր խորաններ:

ՏԱԹԵՎ

Տաթևի վանական համալիրը և Տաթևի ճոպանուղին

Տաթևի վանքը Հայաստանի ամենահայտնի տեսարժան վայրերից է և ճարտարապետական ժառանգության գլուխգործոցը: Պատմական այս հուշարձանը անջնջելի տպավորություն է թողնում իր հոյակապ տեսքով և աներևակայելի ներդաշնակ մթնոլորտով: Հզոր քարե շինությունը հագեցած է համառ հոգևորությամբ և մաքրությամբ,

իսկ բաց երկնքի տակ գտնվող խիտ անտառներով ծածկված բարձր լեռները և խոր կիրճերի լեռնաշղթաներիը ստեղծում են լիակատար և հնազանդ խաղաղության զգացում:

Ի՞նչ է նշանակում Տաթև

Տաթևի վանական համալիրը ստացել է իր անունը՝ ի պատիվ Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթևի: Նա Հայաստանում քրիստոնեություն էր քարոզում: Ժամանակի ընթացքում աշակերտի անունը ենթարկվեց փոփոխության ՝ Սուրբ Եվաստաևեից մինչև Եվստատիոս, Եվստաթիոսից մինչև Պետերվոս և, ի վերջո, մնաց Տաթև անունը: Բառացիորեն, Տաթևը թարգմանվում է որպես «տա թև (ներ)», և ժողովրդական մի լեգենդ ՝ Տաթևի լեգենդը, կապված է այս անվան և վանքի հետ:

«Տաթև» ավանդությունը

Համաձայն մեկ վարկածի ՝ վանքը անվանվել է գլխավոր շինարար-ճարտարապետի անունով: Վանքի կառուցումն ավարտելուց հետո ճարտարապետը նետվեց ձորը ՝ «… կտա ինձ Սուրբ Հոգու թևերը» բառերով: «Տա թևեր» անունը, շատ է համապատասխանում այս վայրին: Վանքը կանգնած է բարձունքի վրա՝ շրջապատված խոր կիրճերով, ինչը հատուկ ռազմավարական նշանակություն ուներ: Նման անհասանելիությունն ու դժվարահասությունը ձեռնտու էին տեղացիներին, քանի որ վանքը դարեր շարունակ հանդիսանում է Սյունիքի իշխանության կրոնական և քաղաքական կենտրոն:

Ի՞նչ տեսնել Տաթևում

Տաթևի տաճարը տուրիստական համալիրի միայն մեկ մասն է: Համալիրում ներառված են նաև աշխարհահռչակ «Տաթևեր» ճոպանուղին, «Տաթևի անապատը», «Սատանայի կամուրջը» և «Գավազան» կոչվող խաչքարով քարե սյունը,որը, ըստ հետազոտողների, երկնային կողմնացույց է, ժամանացույց և ուղղված է դեպի Հայկ-Օրիոնի գոտին: Ըստ գիտնականների, այն նախազգուշացրել է տեղի բնակչությանը մոտելուտ վտանգի մասին՝ ճոճվելով մոտեցող մարդկանց, ձիերի սմբակների և նույնիսկ երկրաշարժի ժամանակ:

Սատանայի կամուրջը տանում է դեպի վանք, որի տակով հոսում են հանքային աղբյուրներ: Վանք տանող ճանապարհին դուք կարող եք տեսնել հին լողավազանների ավերակները, որտեղ լողացել են բուժիչ ջրերի մեջ, և միայն փլատակներն ու մնացորդները են վկայում այստեղ եռացող կյանքի երբեմնի իսկական մեծության և շքեղության մասին:

IX-X դարերում կառուցված Տաթևի վանական համալիրը Երևանից 250 կմ հեռավորության վրա է գտնվում, իսկ Սյունիքի մարզի Գորիս քաղաքից՝ 20 կմ-ի վրա: Տաթևը տեղակայված է լեռան վրա ՝ ծովի մակարդակից 2344 մ բարձրության վրա:

Կարող եք Տաթև հասնել ձեր սեփական մեքենայով, սակայն, քանի որ վանական համալիրը մայրաքաղաք Երևանից բավականին հեռու է ՝ 250 կմ, խորհուրդ է տրվում հասնել դրան ՝ տուրիստական ավտոբուսներով: Կարող եք հասնել Տաթև E117 և H45 ավտոճանապարհներով՝ մոտ 4,5-ից 5 ժամվա ընթացքում: Կարող եք տաքսիով հասնել, այն կարժենա մոտ 30 000 դրամ:

Համալիր հասնելուց հետո վանք կարելի է հասնել «Տաթևեր»-ով՝ աշխարհի ամենաերկար ճոպանուղով:

«Տաթևեր»-ը. Աշխարհի ամենաերկար ճոպանուղին

Ճոպանուղին ունի 5752 մ բարձրություն և 6 կմ երկարություն, որի շնորհիվ այն գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում: Այնուամենայնիվ, Տաթևի ճոպանուղին մուտք է գործել Գինեսի ռեկորդների գիրք ոչ միայն դրա երկարության և բարձրության պատճառով. Այս եզակի և հսկայականհամալիրը կառուցվել է ընդամենը տաս ամսվա ընթացքում: Այս փաստի շնորհիվ է նաև, որ Տաթևը և նրա ճոպանուղին միջազգային մակարդակի զբոսաշրջային կենտրոն են համարվում՝ օրական հյուրընկալելով 1370 այցելուի:

Նախքան Տաթև գնալը, մենք խորհուրդ ենք տալիս նախօրոք ուսումնասիրել եղանակի կանխատեսումը, քանի որ ամպամած օրերին՝ տեղումների ժամանակ, ձորը փակ է՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

Տաթևի պատմության մասին ավելին իմանալու և որևէ հետաքրքիր բան բաց չթողնելու համար առաջարկում ենք խմբային կամ անհատական տուր ամրագրել Երևանից դեպի Տաթևի վանական համալիր:

ՍԱՏԱՆԻ ԿԱՄՈՒՐՋ

Որոտանի Հրաշքը՝ Սատանի Կամուրջ (Ք.ա. IV – II հազարամյակ)

Որոտանի Հրաշքը՝ Սատանի Կամուրջ Զարմանահրաշ է բնությունը՝ լի չքնաղագույն անկյուններով և անձեռակերտ հուշարձաններով, որոնք բնության համաշխարհային ժառանգության անբաժան մասն են կազմում: Բնության ապշեցնող կոթողներից են բնական կամուրջները, որոնք գոյացել են դարերի ընթացքում: Բնական այդ կոթողներից են ,Սատանի կամուրջներրը: Այո, այդ անունով աշխարհում բազմաթիվ կամուրջներ կան՝Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Բուլղարիայում: Կա նաև Հայաստանում...

Որոտան գետի կիրճում է գտնվում Սատանի կամուրջը, որի երկարությունը մոտ 30մ է: Կամուրջը գտնվում է Որոտանի կիրճի ամենախոր հատվածում՝ 700-800մ: Այդ հատվածում կիրճն այնքան նեղ է, որ արևի ճառագայթներն անգամ ի զորու չեն թափանցելու նրա հատակը: Հենց այստեղ էլ գտնվում է բնության գեղատեսիլ և արտասովոր հրաշքը՝ Սատանի կամուրջը, որի շրջակայքում կարկաչում են բազմաթիվ լեռնային աղբյուրներ, որոնց ջրերը գունավորել են ձորի պատերը վարդագույն, դեղին և կանաչ գույներով: Այդ հրաշք կառույցը տրավերտիններից կազմված բնական կամուրջ է: Դարերի ընթացքում կրաքարային կուտակումները հավաքվելով կազմել են այս հզոր քարե կամարը, որի եզրերից կախված են հանքային աղբյուրների առաջացրած շթաքարերը (ստալակտիտներ), իսկ բնական կամրջի տակ գտնվող ժայռային խորշերից ներքև են թափվում գեղատեսիլ ջրվեժներ: Հանքային աղբյուրները գտնում են հենց կամրջի տակ, որոնք լցվում են Որոտան գետը և այն դարձնում ավելի հորդառատ: Դրա շնորհիվ առաջին հայացքից թվում է, թե կամրջի տակով հոսում է սակավաջուր գետակ, սակայն փոխարենը կամրջից դուրս է գալիս ջրառատ Որոտանը: Հավանաբար, հենց այստեղից էլ ծագել է կամրջի անվանումը:

Սատանի կամրջի տակ գտնվող բուժիչ հատկություններով օժտված տաք հանքային ջրերը գոյացրել են ջրավազաններ: Հայտնի է, որ դեռ հնագույն ժամանակներում հայ մեծահարուստներն անպայման ամռան ամիսներին այցելում էին այս հրաշագեղ

քարանձավը՝ բուժիչ լոգանք ընդունելու: Չքնաղ է Սյունյաց բնությունը, որի տարածքում 178 կմ երկարությամբ հոսում է Որոտանը Սյունիքի բնական զարդը: Գետը, հոսելով սքանչելի կիրճով, անցնում է քարեղարյան քարանձավների, բրոնզեդարյան ամրոցների ու վանքերի կողքով: Գետի հունը ինքնին հիանալի վայր է արշավների համար. անտառներով ձգվող արահետները տանում են դեպի Տաթև, Քարահունջ, Հալիձորի բերդ: Գարնան և ամռան ամիսներին Որոտանի կիրճը հրաշալի վայր է ռաֆտինգի սիրահարների համար:

Դուք ունենում եք հնարավորություն թիավարելու հորդառատ գետի ալիքն երով և միաժամանակ վայելելու բնության գեղատեսիլ տեսարանը՝ խոր կիրճեր, սրածայր լեռնագագաթներ, կղզյակ-ամրոցներ: Դե ինչ, կարծում ենք՝ վայրի բնության սիրահարներն արդեն պատրաստվում են հավաքելու իրենց իրերն ու ճանապարհվելու դեպի չքնաղ բնության գիրկը՝ Սյունիք:

ՀԱԼԻՁՈՐ

Հալիձոր, գյուղ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում:

Բնակավայրն ունի բազմադարյա պատմություն և հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Իր աշխարհագրական դիրքով գտնվում է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ամենահայտնի ուղղություններից մեկի՝ Տաթևեր ճոպանուղի-Տաթևի վանք երթուղու վրա: Հանդիսանում է աշխարհի ամենաերկար ճոպանուղու առաջին մեկնարկային կետը: Ունի գեղեցիկ բնություն, որն արտահայտվում է անդնդախոր ձորերով, ժայռապատ և անտառապատ լեռնալանջերով, որոնց ստորոտով հոսում է արագահոս Որոտան գետը:

Հալիձոր անունը ծագել է Հաբանդ գավառի Հալե, Հալիս կոչվող բնակավայրերի անվանումներից։ Աշխարհագրորեն Հալիձորը գտնվում է Որոտան գետի ձախ ափի մոտ՝ ծովի մակարդակից 1300-1350 մ բարձրության վրա։ Սյունիքի մարզի մարզկենտրոն Կապան քաղաքից հեռու է 62 կմ։ Մոտակա քաղաքը Գորիսն է, որից հեռու է 12 կմ դեպի հարավ-արևմուտք։ Հալիձորից հյուսիս-արևելք գտնվում է Շինուհայր գյուղը, հարավում և արևելքում՝ Որոտան գետի կիրճը, արևելքում և հյուսիս-արևելքում՝ մշակովի դաշտեր են։ Հալիձոր բնակավայրով է անցնում հանրապետական նշանակության Հ 45 ավտոճանապարհը։

10-րդ դարի սկզբին իշխանուհի Համազասպուհին Հալիձորը նվիրաբերել է Տաթևի վանքին, որի կալվածքն է եղել մինչև 19-րդ դարը։ Խորհրդային տարիներին մասն է կազմել Հայկական ԽՍՀ Զանգեզուրի գավառի, իսկ 1930 թվականից՝ Գորիսի շրջանի։ Ներկայիս Հալիձորը կառուցվել է 1966 թվականին Հին Հալիձորից փոքր ինչ հեռու և մինչև 1991 թվականը գտնվում էր Հարժիսի խորհտնտեսության կազմում։ Հայաստանի Հանրապետության անկախության սկզբի տարիներին Հալիձորը ընդգրկված է եղել Գորիսի շրջանի կազմում, իսկ 1995 թվականից Սյունիքի մարզում, որի մաս է կազմում նախկին Գորիսի շրջանը։ 2015 թվականից բնակավայրը ներառվել է Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքի մեջ։ Գյուղում է գտնվում կանգուն Սուրբ Մինաս եկեղեցին՝ կառուցված 1611 թվականին։ Գյուղից 2 կմ հարավ-արևմուտք գտնվում է նշանավոր Հարանց Անապատը, շրջակայքում են «Խաչին խութ» կոչվող եկեղեցին, «Պողոս-Պետրոս» մատուռը, մի շարք գյուղատեղիներ՝ «Հալիձոր», «Կարմիր», «Հայկաշեն», «Հայկատափ», Հալե, Հին Շենատեղ, ինչպես նաև բազմաթիվ խաչքարերով գերեզմանոցը։ Որոտանի ձախ ափին, այգիների մեջ պահպանված է ժայռաբեկորի վրա կանգնեցված 1265 թ. արձանագրություն։

Ըստ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքների՝ գյուղի բնակչությունը կազմել է 551 մարդ: Բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ, այգեգործությամբ և մեղվաբուծությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մենք տեսանք, որ Սյունիքի մարզն իր ռեսուրսներով բավականին լավ նախադրյալներ ունի զբոսաշրջությունը զարգացնելու համար: Սակայն միաժամանակ կան խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում այդ ճանապարհին:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ մարզն ունի ռեսուրսներ, սակայն դեռևս չկա այդ ռեսուրսները զբոսաշրջությունը խթանելու նպատակով օգտագործելու քաղաքականություն: Ամբողջ գործը թողնված է մասնավոր հատվածի վրա, և ցավով պետք է նշել, որ զբոսաշրջությունն այստեղ դեռ այնքան էլ գրավիչ ոլորտ չէ ներդրումներ անելու և գործունեություն ծավալելու տեսանկյունից: Զբոսաշրջության դերը շատ մեծ է հասարակական կյանքի բոլոր ոլորտների, հատկապես տնտեսության վրա: Ունենալով զբոսաշրջիկների և հյուրերի մեծ հոսք՝ թեկուզ որոշակի սեզոնների, բայց հնարավոր կլինի ապահովել զբաղվածության բարձր մակարդակ մարզում, ինչն արդեն ենթադրում է կենսամակարդակի բարձրացում: Բացի այդ, տարածքը կդառնա գրավիչ միջավայր հյուրընկալության բիզնես զարգացնելու տեսանկյունից:

Առաջարկություններ՝

- Ստեղծել բարվոք ճանապարհային ցանց, վերաբացել օդանավակայանը, որը կնպաստի տուրիստների թվի ավելացմանը.
- Ստեղծել հյուրանոցներ, սպասարկման ոլորտի լավ ենթակառուցվածքներ,
- Դասընթացների միջոցով բարձրացնել ոլորտում աշխատողների կրթական մակարդակը,
- Մարզում առկա են ձմեռային սպորտաձևերի համար լավ նախապայմաններ ունեցող տարածքներ, որոնք նույնպես կարող են օգտագործվել զբոսաշրջության նպատակով,
- Հին գյուղական բնակավայրերում զարգացնել գյուղական տուրիզմը,

- Նպաստավոր պայմաներ կան էկոտուրիզմի, լեռնագնացության զարգացման համար:

Օգտագործված գրականություն

1. http://syunik.mtad.am/tourism/
2. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659
3. Սյունիքի մարզ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)
4. https://hatis.am/carahunge?ysclid=l9swnlammw800881526
5. https://en.wikipedia.org/wiki/Carahunge
6. https://www.armgeo.am/devils-bridge/
7. https://www.armgeo.am/syunik/
8. syunik.gov.am
9. Մ.Գ. Մանասյան, Ա.Թ. Գրիգորյան, Ա.Հ. Պոտոսյան-Սյունիքի մարզ
10. Ա.Ա. Ասլանյան Զանգեզուր
11. Ք. Պետրոսյան Զանգեզուր